

հով ընդունւած թեմ. տեսչի պաշտօ- թիւնը—պէտք է այժմս գոնէ անմասն նակատարինս, ինչ իրաւունք, այս կը բկ- չմալ ազգային մեծ տօնին մասնակ- նում ենք ինչ իրաւունք ունին արդ- ցելուց, այլ սպէս վարկաբեկելու չափ- պէս վարւելու Շուշու ծխ. դպրոցները և անպատճեր կլինի Դարսի հասարա- ինչ հիմունք ունի պ. Տէր-Գասպարեա- կութեան համար! նրապարակով:

Յ. Մկանումնեան

Դուք, զիտիմ, կասէք որ հիմունք ունիք, արդար էք ձեր վարմունքի մէջ, «որովհետև տղէս է հրաւիրւած պաշտօնեան», «իր կոչման բարձրութեան վրայ չէ կանգնած» և այլն: Կը պատասխանենք: Ճանապարհ կայ բողոքելու ուրիշ՝ ճիշտ և օրինական ճա- նապարհ... Դպրոցի դռները փակելը օրէնքի ճանապարհով հրաւիրւած պաշ- տօնիայի առաջ, սխալ և միանգամայն վասակար ու անթոյլատրելի գործե- լակերպ է:

Ա. Նազանեան

ԺԱՄԱՆԱԿԻ Է ՍԹԱՓԻԵԼՈՒ

Մեծ տօնի նախօրեակին հնք ապ- րում, Հայ մամուլը վաղուց է իր ազ- գու խօսքն ասել. մեծ տօնի՝ հայկա- կան տպագրութեան չորս հարիւրա- մեակը, ընդհանուր հայութեան կող- մից պատշաճաւոր տօնելու առթիւ: Դեռ չեն դադարում մամուլում լոյս տեսնելուց մասնաւոր անհատների կող- մից մեծ տօնին նւիրւած գանազան յօդւածներ ու թղթակցութիւններ. Կով- կասի հայկական մտաւոր երկու կենդ- րոնում Տփխիսում և էջմիածնում ար- դէն նախապատրաստական ժողովներ են կայացել ու խորհրդակցութեան ա- ռել՝ Հայ մտքի տօնը, որպէս ազգային կուլտուրական մի տօն ու եղակին հայ տարհգրութեան մէջ, յաւերժաց- նել ազգային բնոյթ կրող նշանաւոր գործով: Մնացած հայկական վայրե- րից շատերը պատրաստում են ան- մասն չմնալ գալիք օրւայ նշանաւոր լինելը մեծարելուց և ունենալ իրանց լուման ընդհանրութեան դրամարկղի մէջ: Իսկ ինչ է արել կամ մտադիր է անելու կարսը—մէկն կովկասի հայա- շատ քաղաքներից, յանձին իր զիտա- կից և ղեկավարող ոյժերի: Ոչինչ, կարսի ինտելիգենցիան, եթէ այդպի- սին գոյութիւն ունի բառի իմաս- տով, աչք չի բանում հետաքրքրւելու իր շուրջը կատարող նմանօրինակ հ- րեսոյթներով: Հայ մտքի տօն է կա- տարում թէ մի վաստակաւոր հեղի- նակի տարիների աշխատութիւնը մե- ծարւում, կամ վերջինիս մահը ընդ- հանրութեան վիշտ պատճառում, այդ դարսեցու համար միենոյն է, նա սառն է ու անտարբեր իր բնութեան նման, քանի որ մէջ տեղում շահ չկայ:

Այս անփոխարինելի կորուստները որ կրեց Հայ մանկական աշխարհը— յանձին Դ. Աղայեանի մահով և հայ թատերագրութիւնը յանձին՝ Գ. Սուն- դուկեանի, ինչով յիշատակւեց կամ յարգւեց դարսեցու կողմից, դարձեալ նոյն սառնութեամբ և անտարբերու- թեամբ, նոյնը և այսօր, Հայ մտքի տօնի վերաբերմամբ... Սակայն ժա- մանակ է սթափւելու և վերջ տալու միայն անձնական եսին ծառայելը— ամօթ է դարսեցուն ինչքան արհամար- հեց իր մայրենի լեզուն, գրականու-